ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

22 ապրիլի 2014 թվական N 12 -Ա

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014Թ. ԱՊՐԻԼԻ 22-Ի ԹԻՎ-3 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ .

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով , **համայնքի ավագանին որոշում է** ՝

1.Հաստատել Թալին համայնքի ավագանու 2014թ. ապրիլի 22-ի թիվ -3 հերթական նիստի օրակարգը հետևյալ տեսքով ՝

1/Թալինի քաղաքապետարանի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը և աշխատակարգը հաստատելու մասին :

2/Թալին համայնքի ավագանու 14.02.2014թ. թիվ-8 –Ն որոշումը անվավեր ճանաչելու մասին :

3/Թալինի քաղաքապետարանի աճուրդային և մրցույթային հանձնաժողովի կազմը հաստատելու մասին :

4Թալին համայնքի ավագանու 04.10.2012թ. թիվ 15 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին :

5/Թալին համայնքի ավագանու 13.12.2013թ. թիվ 48-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին :

6/ Թալին համայնքի ավագանու 13.12.2013թ. թիվ 49-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին :

7/Թալին համայնքի ավագանու 13.12.2013թ. թիվ 50-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին :

8/Համայնքի ղեկավարի հաղորդումը 2014թ. բյուջեի 1-ին եռամսյակի կատարողականի մասին :

9. Թալին համայնքի ավագանու 30.08.2012թ. թիվ-5 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին :

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -7 դեմ -0 ձեռնպահ -0

1.Արամյան Արամ

2.Գևորգյան Թամարա

3.Դիլանյան Հայկ

4.Մկրտչյան Սերգե

5.Սարգսյան Տիգրան

6.Կարապետյան Արթուր

7.Գրիգորյան Սերյոժա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԱՐԱՄՅԱՆ

ք. Թալին
22 ապրիլի 2014թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ
## ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
## ՈՐՈՇՈՒՄ

22 ապրիլի 2014 թվական N 13-Ա

### ԹԱԼԻՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻՆ ԿԻՑ ԳՈՐԾՈՂ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի և << Իրավական ակտերի մասին >> ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի դրույթներով , հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 24.02.2011թ. թիվ 164-Ն որոշման պահանջները , **համայնքի ավագանին որոշում է** ՝

1.Ստեղծել քաղաքապետարանի խնամակալության և հոգեբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգեբարձության հանձնաժողով , բաղկացած 7 հոգուց , հետևյալ կազմով ՝

1.Գրիգորյան Ժորա
2.Գրիգորյան Ռիտա
3.Կարապետյան Արթուր
4.Գևորգյան Թամարա
5.Կարապետյան Անահիտ
6.Ներսիսյան Շուշանիկ
7.Դանիելյան Գայանե

2.Հանձնաժողովի նախագահ նշանակել Ժորա Գրիգորյանին , քարտուղար՝ Ռիտա Գրիգորյանին ։

3.Հաստատել Թալինի քաղաքապետարանի խնամակալության և հոգեբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգեբարձության հանձնաժողովի աշխատակարգը , ՀՀ տարածքային կառավարման նախարարի 26.09.2012թ. թիվ 115-Ա հրամանով հաստատված խնամակալության և հոգեբարձության մարմիններին կից գործող խնամակալության և հոգեբարձության հանձնաժողովների օրինակելի աշխատակարգին համապատասխան ։

4.Ուժը կորցրած ճանաչել Թալին համայնքի ավագանու ՝ 30.08.2012թ. թիվ 5 որոշման 4-րդ և 4.1 կետերը , 04.02.2013թ. թիվ 4-Ա և 13.12.2013թ. թիվ 65-Ա որոշումները քաղաքապետարանի խնամակալության և հոգեբարձության մարմնի և կատարված փոփոխությունների վերաբերյալ:

Կողմ -7 դեմ -0 ձեռնպահ -0

1.Արամյան Արամ

2.Գևորգյան Թամարա

3.Դիլանյան Հայկ

4.Մկրտչյան Սերգե

5.Սարգսյան Տիգրան

6.Կարապետյան Արթուր

7.Գրիգորյան Սերյոժա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝ Ս.ԱՐԱՄՅԱՆ

ք. Թալին

22 ապրիլի 2014թ.

Հավելված

Թալին Համայնքի ավագանու
2014թ ապրիլի 22-ի թիվ 13-Ա որոշման

# ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

## ԹԱԼԻՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻՆ ԿԻՑ ԳՈՐԾՈՂ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը(այսուհետ՝ հանձնաժողով) ստեղծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի փետրվարի 24 << Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N922-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N-164 որոշմամբ նախատեսված Մ՝ աշխատանքների համակարգման նպատակով:

Հանձնաժողովի աշխատակարգի նպատակն է առավել արդյունավետ դարձնել հանձնաժողովի աշխատանքները և կանոնակարգել հանձնաժողովի աշխատանքներին վերաբերող և հանձնաժողովի կանոնադրությամբ չկարգավորված հարցերը:

### 1.ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

2. Հանձնաժողովի անհատական կազմից համայնքի ավագանու որոշմամբ սահմանվում են հանձնաժողովի նախագահը և քարտուղարը:

3. Հանձնաժողովը իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են առնվազն յուրաքանչյուր երեք ամիսը մեկ անգամ:

Հանձնաժողովի նիստում որոշվում է հաջորդ հերթական նիստի օրը: Անհրաժեշտության դեպքում հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ կարող է գումարվել արտահերթ նիստ:

Հանձնաժողովի անդամը կամ քարտուղարը արտահերթ նիստ գումարելու առաջարկությամբ կարող է դիմել հանձնաժողովի նախագահին:

4. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

5. Հանձնաժողովը որոշումները ընդունում է քվեարկության միջոցով:հանձնաժողովի որոշմանը դեմ քվեարկած հանձնաժողովի անդամների հատուկ կարծիքները կցվում են արձանագրությանը:

6. Հանձնաժողովի նիստերը վարում է հանձնաժողովի նախագահը կամ նրա հանձնարարությամբ հանձնաժողովի անդամներից որևէ մեկը:

7. Հանձնաժողովի անդամների առաջարկությամբ և նախագահի հրավերով հանձնաժողովի նիստերին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության մարզպետարանների, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի, համայնքների խնամակալության և հոգաբարձության մարմինների, Հայաստանի Հանրապետության մարզպետարանների սոցիալական ծառայության տարածքային մարմինների, ինչպես նաև համայնքային սոցիալական ծառայության տարածքային բաժինների , Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի զբաղվածության տարածքային կենտրոնների, բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների, ուսումնական հաստատությունների, առողջապահական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության ոստիկանության տարածքային մարմինների, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների ներկայացուցիչները:

8. Հանձնաժողովի նիստերին դիտորդի կարգավիճակով կարող են մասնակցել երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության ոլորտում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները:

## II. ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

9. Հանձնաժողովի նիստերն անցկացվում են հանձնաժողովի նախագահի կողմից հաստատված օրակարգով:

Հանձնաժողովի նախագահի որոշում է հանձնաժողովի նիստի անցկացման օրը և ժամը:

10. Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ հանձնաժողովի նիստի օրակարգում ընդգրկելու համար կարող է նիստից առնվազն 15 օր առաջ հարց ներկայացնել հանձնաժողովի նախագահին:

11. Հանձնաժողովի օրակարգում նշվում են՝

1) հանձնաժողովի նիստի անցկացման վայրը, օրը և ժամը

2) քննարկման ենթակա հարցերը

3) քննարկվող յուրաքանչյուր հարցը զեկուցողի անունը, ազգանունը:

12. Հանձնաժողովի նիստի օրակարգը և քննարկվելիք հարցերին վերաբերվող անհրաժեշտ փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին են փոխանցվում նիստից առնվազն 7 օր առաջ:

13. Հանձնաժողովի գործունեության կազմակերպչական-տեխնիկական աշխատանքներն ապահովում է հանձնաժողովի քարտուղարը:

## III. ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

14. Հանձնաժողովի նիստի արձանագրումն ապահովում է հանձնաժողովի քարտուղարը:

15. Նիստի արձանագրության մեջ նշվում են՝

1)նիստի անցկացման ամիսը, ամսաթիվը, տարեթիվը և վայրը, նիստն սկսելու և ավարտելու ժամերը

2) նիստի օրակարգը

3)նիստին մասնակցող , հրավիրված անձանց, հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների անունները

4) քննարկվող հարցերի, զեկուցումների և ելույթներինհիմնական դրույթները

5)ընդունված որոշումները, դրանց տարածման և (կամ) հրապարակման ձևերը:

16. Հանձնաժողովի նիստի արձանագրությունը 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում են հանձնաժողովի նախագահը և քարտուղարը:

17. Հանձնաժողովի նիստերի արձանագրությունները պահվում են համայնքապետարանի աշխատակազմում:

## IV. ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

18. Հանձնաժողովի նախագահը՝

1) նախագահում է հանձնաժողովի նիստերը

2) հաստատում է հանձնաժողովի օրակարգը և ստորագրում հանձնաժողովի ընդունած որոշումներն ու արձանագրությունները

3) լսում է հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների կատարման ընթացքի մասին հաշվետվությունները և տալիս ցուցումներ ու հանձնարարականներ

4) որոշում է հանձնաժողովի նիստերին հրավիրվող անձանց կազմը

5) իրականացնում Աշխատակարգով սահմանված այլ լիազորություններ:

19. Հանձնաժողովի անդամը՝

1) մասնակցում է հանձնաժողովի նիստերին

2) ներկայացնում է հարցեր հանձնաժողովի օրակարգում ընդգրկելու համար

3) հանձնաժողովի նիստերի ընթացքում քննարկվող հարցերի վերաբերյալ ներկայացնում է բանավոր կամ գրավոր կարծիք

4) մասնակցում է որոշումների ընդունման համար քվեարկությանը

5) ծանոթանում է հանձնաժողովի նիստերի արձանագրություններին:

20. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) ապահովում է Հանձնաժողովի աշխատանքների , նիստերի ,օրակարգերի ,անհրաժեշտ նյութերի , ինչպես նաև որոշումների նախագծերի նախապատրաստումը և դրանք տրամադրում հանձնաժողովի անդամներին

2) Հանձնաժողովի անդամներին իրազեկում է հանձնաժողովի նիստերի անցկացման օրվա, վայրի և ժամի մասին

## V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

21. Հանձնաժողովի քարտուղարը հանձնաժողովի նիստի արձանագրությունը նիստից 5 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է հանձնաժողովի բոլոր անդամներին, ինչպես նաև ներկայացնում համապատասխան մարզպետարան:
22. Հանձնաժողովի կողմից ընդունած որոշումները տեղադրվում են համայնքի, ինչպես նաև համապատասխան մարզպետարանի ինտերնետային կայքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

22 ապրիլի 2014 թվականի N 14-Ա

## ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 14.02.2014թ. ԹԻՎ 8-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Իրավական ակտերի մասին >> ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 1-ի մասի 1-ին կետի դրույթներով և հիմք ընդունելով ՀՀ Արագածոտնի մարզպետարանի 21.02.2014թ. թիվ 01/19/532-24 գրությունը , **համայնքի ավագանին որոշում է՝**

1.Անվավեր ճանաչել Թալին համայնքի ավագանու 14.02.2014թ. <<Թալին համայնքի սեփականություն համարվող հողամասը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին >> թիվ 8-Ն որոշումը :

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -7 դեմ -0 ձեռնպահ -0

1.Արամյան Արամ

2.Գևորգյան Թամարա

3.Դիլանյան Հայկ

4.Մկրտչյան Սերգե

5.Սարգսյան Տիգրան

6.Կարապետյան Արթուր

7.Գրիգորյան Սերյոժա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԱՐԱՄՅԱՆ

ք. Թալին
22 ապրիլի 2014թ .

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

22 ապրիլի 2014 թվական N 15-Ա

## ԹԱԼԻՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասով և << Իրավական ակտերի մասին >> ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի դրույթներով , հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշման պահանջները , **համայնքի ավագանին որոշում է՝**

1.Հաստատել Թալինի քաղաքապետարանի աճուրդային և մրցույթային հանձնաժողովի կազմը , բաղկացած յոթ հոգուց՝

1.Սարգիս Արամյան

2.Ռազմիկ Մարգարյան

3.Խաչատուր Տերտերյան

4.Արմեն Գրիգորյան

5.Արամ Արամյան

6.Հայկ Դիլանյան

7.Արթուր Կարապետյան

2.Հանձնաժողովի նախագահ նշանակել Սարգիս Արամյանին , քարտուղար Ռազմիկ Մարգարյանին :

3.Ուժը կորցրած ճանաչել Թալին համայնքի ավագանու՝ 30.08.2012թ. թիվ 5 որոշման 5-րդ կետը , 30.04.2013թ. թիվ 11-Ա , և 13.12.2013թ. թիվ 66-Ա որոշումները քաղաքապետարանի աճուրդային և մրցույթային հանձնաժողովի և կատարված փոփոխությունների վերաբերյալ :

4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -7 դեմ -0 ձեռնպահ -0

1.Արամյան Արամ

2.Գևորգյան Թամարա

3.Դիլանյան Հայկ

4.Մկրտչյան Սերգե

5.Սարգսյան Տիգրան

6.Կարապետյան Արթուր

7.Գրիգորյան Սերյոժա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԱՐԱՄՅԱՆ

ք. Թալին
22 ապրիլի 2014թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

22 ապրիլի 2014 թվական N 16-Ա

## ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 04.10.2012թ. ԹԻՎ 15-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> << օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի , < Իրավական ակտերի մասին >> << օրենքի 70-րդ և 72-րդ հոդվածների դրույթներով և հիմք ընդունելով Աշտարակի ՏՀՏ 24.03.2014թ. թիվ 2-9/6-538 պաշտոնական գրությունը , **համայնքի ավագանին որոշում է**՝

1.<< Թալինի ՏՀՏ-յան հետ կնքված վարչական շենքի վարձակալության պայմանագրի փոփոխության մասին>> 04.10.2012թ. թիվ 15 որոշման 1-ին և 2-րդ կետերը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

1/Թալին քաղաքի Խանջյան 9 հասցեում գտնվող , քաղաքապետարանին պատկանող վարչական շենքից << ԿԱ ՊԵԿ Աշտարակի ՏՀՏ Թալինի տարածքային բաժնին վարձակալությամբ տրամադրել 41,68 քմ տարածք , ամսեկան 50000/ հիսուն հազար / դրամ վարձավճարով :
2/Գույքի վաձակալության պայմանագրի գործողության ժամկետ սահմանել 2014թ. մայիսի 1-ից մինչև 2019 հունվարի 1-ը:
2.Մ/թ. մայիսի 1-ից ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 04.10.2012թ. թիվ 15 որոշման 1-ին և 2-րդ կետերը :
3.Սույն որոշման համաձայն , կատարել համապատասխան փոփոխություններ Աշտարակի ՏՀՏ-յան հետ 13.07. 2013թ. կնքված թիվ 1254 պայմանագրի 1.2 և 5.1 կետերում :
4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից :

Կողմ -7 դեմ -0 ձեռնպահ -0

1.Արամյան Արամ

2.Գևորգյան Թամարա

3.Դիլանյան Հայկ

4.Մկրտչյան Սերգեյ

5.Սարգսյան Տիգրան

6.Կարապետյան Արթուր

7.Գրիգորյան Սերյոժա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԱՐԱՄՅԱՆ

ք. Թալին
22 ապրիլի 2014թ .

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

22 ապրիլի 2014 թվականի N 17-Ա

## ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 13.12.2013թ. ԹԻՎ 48-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետի և 32-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթներով , << Իրավական ակտերի մասին >> ՀՀ օրենքի 70-րդ և 72-րդ հոդվածների դրույթներով , **համայնքի ավագանին որոշում է**՝

1.Հաստատել՝ 2014թ. Թալինի Գ. Ավդալյանի անվան մարզադպրոց ՀՈԱԿ աշխատակիցների թվաքանակը , հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2014թ. մայիսի 1-ից :
3.Սույն թվականի մայիսի 1-ից ուժը կորցրած ճանաչել Թալին համայնքի ավագանու <<Թալինի Գ. Ավդալյանի անվան մարզադպրոց >> ՀՈԱԿ աշխատակիցների թվաքանակը , հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> 13.12.2013թ. թիվ 48-Ա որոշումը :

Կողմ -6 | դեմ -1 | ձեռնպահ -0

1.Արամյան Արամ

Սարգսյան Տիգրան

2.Գևորգյան Թամարա

3.Դիլանյան Հայկ

4.Մկրտչյան Սերգե

5. Կարապետյան Արթուր

6. Գրիգորյան Սերյոժա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԱՐԱՄՅԱՆ

ք. Թալին
22 ապրիլի 2014թ .

Հավելված

Թալին քաղաքային համայնքի ավագանու

2014թ. ապրիլի 22-ի թիվ 17-Ա որոշման

Թալինի Գ. Ավդալյանի Անվան Մարզադպրոց ՀՈԱԿ –յան Աշխատակիցների Թվաքանակը , Հաստիքացուցակը ԵՎ Պաշտոնային Դրույքաչափերը .

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ 12

| ՀՀ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ | ՊԱՇՏՈՆԱ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ ԴՐԱՄՈՎ/ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 1 | 75000 | 75000 |
| 2 | Հաշվապահ | 1 | 1 | 60000 | 60000 |
| 3 | Մարզիչ | 5 | 5 | 60000 | 300000 |
| 4 | Հրահանգիչ , մեթոդիստ | 1 | 1 | 75000 | 75000 |
| 5 | Բուժքույր | 0,5 | 1 | 30000 | 30000 |
| 6 | Պահակ | 1 | 1 | 60000 | 60000 |
| 7 | Հնոցապան | 0,5 | 1 | 30000 | 30000 |
| 8 | Հավաքարար | 1 | 1 | 60000 | 60000 |
|  | ԸՆԴԱՄԵՆԸ | x | 12 | x | 690 000 |

Կողմ -6　　դեմ -1　　ձեռնպահ -0

1.Արամյան Արամ

2.Գևորգյան Թամարա

3.Դիլանյան Հայկ

4.Մկրտչյան Սերգե

5. Կարապետյան Արթուր

6. Գրիգորյան Սերյոժա

Սարգսյան Տիգրան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ　　Ս. ԱՐԱՄՅԱՆ

ք. Թալին
22 ապրիլի 2014թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

22 ապրիլի 2014 թվական N 18-Ա

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 13.12.2013թ. ԹԻՎ 49 -Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետի և 32-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթներով , << Իրավական ակտերի մասին > > ՀՀ օրենքի 70-րդ և 72-րդ հոդվածների դրույթներով , **համայնքի ավագանին որոշում է** ՝

1.Հաստատել ՝ 2014թ. Թալինի մանկական գեղարվեստի դպրոց ՀՈԱԿ աշխատակիցների թվաքանակը , հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի ։

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2014թ. մայիսի 1-ից ։

3.Սույն թվականի մայիսի 1-ից ուժը կորցրած ճանաչել Թալին համայնքի ավագանու << Թալինի մանկական գեղարվեստի դպրոց ՀՈԱԿ աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> 13.12.2013թ. թիվ 49-Ա որոշումը ։

Կողմ -6 | դեմ -1 | ձեռնպահ -0

1.Առամյան Արամ

2.Գևորգյան Թամարա

3.Դիլանյան Հայկ

4.Մկրտչյան Սերգե

5. Կարապետյան Արթուր

6. Գրիգորյան Սերյոժա

Դեմ՝ Սարգսյան Տիգրան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԱՌԱՄՅԱՆ

ք. Թալին

22 ապրիլի 2014թ.

Հավելված

Թալին քաղաքային համայնքի ավագանու

2014թ. ապրիլի 22-ի թիվ 18-Ա որոշման

Թալինի Մանկական Գեղարվեստի Դպրոց ՀՈԱԿ Աշխատակիցների Թվաքանակը , Հաստիքացուցակը ԵՎ Պաշտոնային Դրույքաչափերը :

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ 11

| ՀՀ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ | Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 1 | 75000 | 75000 |
| 2 | Հաշվապահ | 1 | 1 | 60000 | 60000 |
| 3 | Ուսուցիչ | 1 | 6 | 60000 | 360000 |
| 4 | Գործավար-լաբորանտ | 0,5 | 1 | 30000 | 30000 |
| 5 | Հավաքարար | 0,5 | 1 | 30000 | 30000 |
| 6 | Պահակ | 0,5 | 1 | 30000 | 30000 |
| | Ընդամենը | X | 11 | X | 585000 |

Կողմ -6 դեմ -1 ձեռնպահ -0

1.Արամյան Արամ Սարգսյան Տիգրան

2.Գևորգյան Թամարա

3.Դիլանյան Հայկ

4.Մկրտչյան Սերգե

5. Կարապետյան Արթուր

6. Գրիգորյան Սերյոժա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԱՐԱՄՅԱՆ

ք. Թալին

22 ապրիլի 2014թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

22 ապրիլի 2014 թվական N 19-Ա

## ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 13.12.2013թ. ԹԻՎ 50-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետի և 32-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթներով , << Իրավական ակտերի մասին >> ՀՀ օրենքի 70-րդ և 72-րդ հոդվածների դրույթներով , **համայնքի ավագանին որոշում է** ՚՚

1.Հաստատել ՚2014թ. Թալինի թիվ – 2 մանկապարտեզ ՀՈԱԿ աշխատակիցների թվաքանակը , հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը , համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2014թ. մայիսի 1-ից:

3.Սույն թվականի մայիսի 1-ից ուժը կորցրած ճանաչել Թալին համայնքի ավագանու <<Թալինի թիվ-2 մանկապարտեզ ՀՈԱԿ աշխատակիցների թվաքանակը , հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին >> 13.12.2013թ. թիվ 50-Ա որոշումը :

| Կողմ -6 | դեմ -1 | ձեռնպահ -0 |
|---|---|---|
| 1.Արամյան Արամ | Սարգսյան Տիգրան | |
| 2.Գևորգյան Թամարա | | |
| 3.Դիլանյան Հայկ | | |
| 4.Մկրտչյան Սերգե | | |
| 5. Կարապետյան Արթուր | | |
| 6. Գրիգորյան Սերյոժա | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԱՐԱՄՅԱՆ

ք. Թալին
22 ապրիլի 2014թ .

Հավելված
Թալին քաղաքային համայնքի ավագանու
2014թ. ապրիլի 22-ի թիվ 19-Ա որոշման

ԹԱԼԻՆԻ ԹԻՎ-2 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը -25

| N | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Հաստիքների քանակը | Պաշտոնային դրույքաչափերը /ՀՀ դրամով/ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 1 | 75000 | 75 000 |
| 2 | Հաշվապահ | 1 | 1 | 60 000 | 60 000 |
| 3 | Դաստիարակ | 0,5 | 8 | 30 000 | 240 000 |
| 4 | Դաստիարակի օգնական | 4 | 4 | 60 000 | 240 000 |
| 5 | Երաժիշտ | 1 | 1 | 60 000 | 60 000 |
| 6 | Բուժքույր | 1 | 1 | 60 000 | 60 000 |
| 7 | Ռուսաց լեզվի մասնագետ | 1 | 1 | 60 000 | 60 000 |
| 8 | Տնտեսվար | 1 | 1 | 60 000 | 60 000 |
| 9 | Խոհարար | 1 | 1 | 60 000 | 60 000 |
| 10 | Հնոցապան | 0,5 | 1 | 30 000 | 30 000 |
| 11 | Հավաքարար | 1 | 1 | 60 000 | 60 000 |
| 12 | Մանկական կենտրոնի մեթոդիստներ /լոգոպեդ,հոգեբան,սոցիալական աշխատող / | 0,5 | 4 | 30 000 | 120 000 |
| | Ընդամենը | x | 25 | x | 1,125 000 |

| | | |
|---|---|---|
| Կողմ -6 | դեմ -1 | ձեռնպահ -0 |
| 1.Արամյան Արամ | Սարգսյան Տիգրան | |
| 2.Գևորգյան Թամարա | | |
| 3.Դիլանյան Հայկ | | |
| 4.Մկրտչյան Սերգեյ | | |
| 5. Կարապետյան Արթուր | | |
| 6. Գրիգորյան Սերյոժա | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԱՐԱՄՅԱՆ

ք. Թալին
22 ապրիլի 2014թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

22 ապրիլի 2014 թվական N 20-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2014ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի և <<Բյուջետային համակարգի մասին >> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով , **համայնքի ավագանին որոշում է**՝

1.Ընդունել ի գիտություն համայնքի 2014թ. բյուջեի առաջին եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումը , համաձայն հավելվածի ։

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող տասներորդ օրվանից։

Կողմ -7 դեմ -0 ձեռնպահ -0

1.Արամյան Արամ

2.Գևորգյան Թամարա

3.Դիլանյան Հայկ

4.Մկրտչյան Սերգե

5. Կարապետյան Արթուր

6. Գրիգորյան Սերյոժա

7. Սարգսյան Տիգրան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԱՐԱՄՅԱՆ

ք. Թալին
22 ապրիլի 2014թ .

ՀԱՎԵԼՎԱԾ

Թալին քաղաքային համայնքի ավագանու

ապրիլի 22-ի թիվ 20 –Ն որոշման

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2014թ. 1-ին եռամսյակի բյուջեի եկամուտների և ծախսերի կատարման

| N | Եկամուտների անվանումը | Տարեկան պլան | 1-ին եռամսյակի պլան | Փաստացի | % |
|---|---|---|---|---|---|
| 1 | Գույքահարկ | 13700,0 | 3420 | 3728,9 | 108,8 |
| 2 | Հողի հարկ | 5200,0 | 1300 | 878,2 | 67,5 |
| 3 | Պետ/տուրք | 5000,0 | 1250 | 1230,1 | 98,4 |
| 4 | Տեղ. տուրք | 4512,0 | 1128 | 344,5 | 30,5 |
| 5 | Այլ եկամուտներ | 15581,0 | 3895,2 | 2042,8 | 52,4 |
| 5.1 | Հողի վարձակալություն | 900,0 | 225,0 | 38,0 | 16,9 |
| 5.2 | Գույքի վարձակալություն | 5500,0 | 1375,0 | 1016,3 | 74,0 |
| 5.3 | Պետ. կողմից պատվիր. լիազ. | 4358,6 | 1089,0 | 0 | 0 |
| 5.4 | Այլ եկամուտներ | 4822,4 | 1205 | 1064,5 | 88,3 |
| 6 | Դոտացիա | 71292,3 | 17823,1 | 17823,1 | 100 |
| 6.1 | Այլ դոտացիա | 11153,2 | 2788,3 | 2788,3 | 100 |
| 6.2 | Սուբվենցիա | 2913,5 | 728,2 | 300,1 | 41,2 |
| | Ընդամենը եկամուտներ | 129352,0 | 323380 | 29212 | 90,3 |
| 7 | Ծախսեր | 129352,0 | 32338 | 24040,0 | 74,3 |
| 7.1 | Կառ. ապարատ | 30310,0 | 5187,3 | 5187,3 | 68,4 |
| 7.2 | Ընդհանուր բնույթի ծառայութ. | 4528,6 | 1132 | 502,9 | 44,3 |
| 7.3 | Այլ ծառայություններ | 94513,4 | 23628 | 18350,0 | 77,7 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԱՐԱՄՅԱՆ

ք. Թալին

22 ապրիլի 2014թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

22 ապրիլի 2014 թվական N 21-Ա

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 30.08.2012Թ. ԹԻՎ-5 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> << օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասով և <<Իրավական ակտերի մասին >> << օրենքի 70-րդ և 72-րդ հոդվածների դրույթներով , ***համայնքի ավագանին որոշում է***`

1.Թալին համայնքի ավագանու 30.08.2012թ. թիվ 5 որոշման 7-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ`

1/Ստեղծել քաղաքապետարանի գյուղատնտեսության , բնապահպանության և շրջակա միջավայրի պահպանության մշտական գործող հանձնաժողով , բաղկացած հինգ հոգուց :

2/Հաստատել հանձնաժողովի կազմը , հետևյալ անդամներով`

-Տերտերյան Խաչատուր

-Գրիգորյան Գևորգ

-Միքայելյան Ռոստոմ

-Գրիգորյան Սերյոժա

-Գրիգորյան Արթուր

3/Հանձնաժողովի նախագահ նշանակել Խաչատուր Տերտերյանին , քարտուղար Գևորգ Գրիգորյանին :

4/Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 30.08.2012թ. թիվ-5 որոշման 7-րդ կետը :

2.Թալին համայնքի ավագանու 30.08.2012թ. թիվ-5 որոշման 8-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ :

1 /Ստեղծել քաղաքապետարանի առևտրի և սպասարկման , արդյունաբերության և տրանսպորտի մշտական գործող հանձնաժողով , բաղկացած յոթ հոգուց:

2/Հաստատել հանձնաժողովի կազմը հետևյալ անդամներով ՝

-Աթանեսյան Հայկ

-Գրիգորյան Արմեն

-Գրիգորյան Գևորգ

-Մարգարյան Հովհաննես

-Մկրտչյան Սերգե

-Սարգսյան Տիգրան

-Գրիգորյան Սերյոժա

3/Հանձնաժողովի նախագահ նշանակել Հայկ Աթանեսյանին , քարտուղար Արմեն Գրիգորյանին:

4/Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 30.08.2012թ. թիվ-5 որոշման 8-րդ կետը :

3.Թալին համայնքի ավագանու 30.08.2012թ. թիվ 5 որոշման 9-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ :

1.Ստեղծել քաղաքապետարանի հասարակական կարգի պահպանման , անչափահասների հետ տարվող աշխատանքների մշտական գործող հանձնաժողով, բաղկացած յոթ հոգուց:

2/Հաստատել հանձնաժողովի կազմը հետևյալ անդամներով ՝

-Տերտերյան Խաչատուր

-Կարապետյան Թամարա

-Մանուկյան Տաթևիկ

-Դիլանյան Հայկ

-.Սարգսյան Տիգրան

-Հակոբյան Համլետ

-Գրիգորյան Ռիտա

3/Հանձնաժողովի նախագահ նշանակել Խաչատուր Տերտերյանին , քարտուղար Ռիտա Գրիգորյանին :

4/Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 30.08.2012թ. թիվ-5 որոշման 9-րդ կետը :

4.Թալին համայնքի ավագանու 30.08.2012թ. թիվ-5 որոշման 10-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

1/Ստեղծել քաղաքապետարանի առողջապահության , աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական գործող հանձնաժողով , բաղկացած հինգ հոգուց:

2/Հաստատել հանձնաժողովի կազմը հետևյալ անդամներով՝

-Աթանեսյան Հայկ

-Գևորգյան Թամարա

-.Կարապետյան Արթուր

-Մկրտչյան Սերգե

-Հարոյան Բաբկեն

3/Հանձնաժողովի նախագահ նշանակել Հայկ Աթանեսյանին , քարտուղար Արթուր Կարապետյանին :

4.Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 30.08.2012թ. թիվ 5 որոշման 10-րդ կետը :

5.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -7 դեմ -0 ձեռնպահ -0

1.Արամյան Արամ

2.Գևորգյան Թամարա

3.Դիլանյան Հայկ

4.Մկրտչյան Սերգե

5. Կարապետյան Արթուր

6. Գրիգորյան Սերյոժա

7. Սարգսյան Տիգրան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՐԱՄՅԱՆ

ք. Թալին
22 ապրիլի 2014թ.